



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 6 ՄԱՅԻՍ, 2013

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

### ՍԱՐՄՈՍ 46

ԱՄԵՆԱԿԱԼ ԱՍՏՈՒԱԾԸ ՄԵՋԻ ՀԵՏ Է

Աստուած է մեր ապաւէնն ու գօրութիւնը,  
նեղութեանց մէջ շուտով հասնող օգնականը:  
Հետեւաբար մենք չենք վախնար,  
նոյնիսկ եթէ աշխարհը սարսի,  
եւ լեռները իյնան ծովերուն խորը:  
Նոյնիսկ եթէ ալիքները շառաչեն ու փրփրին,  
եւ լեռները դողան անոնց կատաղութենէն:  
Ամենակալ Տէրը մեզի հետ է.  
մեր հայրերուն Աստուածը մեր ապաստանն է:  
Եկէ՛ք, տեսէ՛ք Տիրոջ գործերը,  
գարմանահրաշ գործերը՝ որ ան կ'ընէ երկրի վրայ:

### ՆԱՐԱԿԱՆ-ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,  
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

### ԱՊՈԹՔ

Կ'օրհնենք քեզ, ո՛վ Տէր Աստուած մեր փրկիչը,  
որ միշտ մեզի Հետ ես եւ բնաւ չես լքեր անոնք՝  
որոնք Հաւատքով եւ ճշմարտութեամբ օգնութեան կը կանչեն քեզ:  
Կ'աղաչենք եւ կը խնդրենք, Տէ՛ր, մեզ խաղաղութեան մէջ պահէ,  
եւ դուն առաջնորդէ մեր քայլերը, որպէսզի խաղաղութեամբ եւ խնդրութեամբ Համնինք  
յաւիտենական կեանքի ժառանգութեան:  
Միշտ փառաւորելով Ամենասուրբ Երրորդութիւնը՝  
Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին:  
Յաւիտեանա: Ամէն:

**ԱՍՏՈՒԾՈՑ ՈՒԽՏԸ ՆՈՅԻՆ ՀԵՏ (9:1-29)**

Ջրհեղեղէն յետոյ նոր սկիզբ: Այնպէս ինչպէս առաջին սրտեղծագործութեան պահուն Աստուծոյ հրահանգն էր «Աճեցէք, բազմացէք եւ երկիրը լեցուցէք» հոս եւս նոյն հրահանգը կը փրոյժի, բայց ի փարբերութիւն առաջինէն, այս անգամ կայ վախ հասկացողութիւնը: Վախի գաղափարը մեղքի հետեւանքէն կու գայ, իսկ վախը սկիզբն է թշնամութեան:

Միւս կողմէ, նաեւ փոփոխութիւն փեղի կ'ունենայ մարդուն սննդականոնի մէջ: Անցեալին Աստուած մարդուն իբրեւ ուրելջք սահմանած էր բոլոր փեսակի պրոյններ եւ բանջարեղէններ, իսկ անասուններուն համար խոտեղէններ: Բայց ահա հանկարծ սննդականոնի փոփոխութիւն է որ փեղի կ'ունենայ, եւ միւսը կ'արքոսոսի ուրելիքի համար, միայն թէ արիւնով չուրէ: Որովհետեւ արիւնը կը խորհրդանշէ կեանք: Հետեւաբար, ապով նաեւ դաստիարակելու համար մարդը, ինչ որ յետագային Աստուած զայն պիտի օգտագործէր որպէս փրկութեան խորհրդանիշ, որմէ յետոյ մինչեւ Քրիստոսի գալուստը եւ Անոր զոհագործումը:

Հետաքրքրականօրէն ջրհեղեղի ջուրը կը խորհրդանշէ նաեւ մկրտութեան ջուրը (Ա. Պետ 3:19-21): Այնպէս ինչպէս անցեալին Աստուած Նոյը ազապեց ջրհեղեղէն, այնպէս ալ մկրտութեան պահուն, Քրիստոսի հետ թաղուելով, Քրիստոսի հետ ալ յարութիւն առած նոր կեանքի կը կոչուինք:

Ապա, Աստուած ուխտ մըն է որ կը կնքէ: Ամբողջ Հին Կտակարանի ընթացքին Աստուած 7 ուխտեր կը կնքէ մարդոց հետ: Նոյին, Աբրահամին հետ երկու ուխտ, Մովսէսին, Փենտեհսին, Դաւիթին, եւ Երեմիային: Ուխտը նաեւ կը նշանակէ դաշինք, խոստում, որ նաեւ իր պայմանը եւ կերպը ունի: Ահա այդ ուխտին իբրեւ նշան Աստուած իր աղեղը կը դնէ երկինքի վրայ:

Նոյ ըլլալով առաջին երկրագործը այգի մը փնկեց, եւ սակայն զոհ գնաց արբեցութեան: Այսպէս նաեւ կը խօսի գինիին եւ անկէ եկած չարիքներուն մասին: Ասով ցոյց կու տայ մոլութեան վնասները, չափազանցութիւն եւ ոեւէ բանի սխալ կերպով օգտագործելու արդիւնքը: Ինչպէս Պօղոս առաքեալ պիտի ըսէ, «ոեւէ բանի գերին չդառնաք» (Ա Կորնթ):

Հետաքրքրականօրէն Նոյ իր գինովութեան պատճառով երբ կը մերկանայ եւ Քամ այդ մերկութիւնը իր եղբայրներուն կը պարմէ, Նոյ կ'անիծէ Քամի որդին՝ Քանանը: Ինչո՞ւ Քանանը եւ ոչ թէ Քամը: Նախ մերկութիւնը պարմել իր եղբայրներուն ոչ պարզ մերկութիւնը, այլ ինչ-ինչ խորհուրդներ անցնելով իր միտքէն: Ուստի Քամին ըրածին դիմաց Քանանն է որ կը դատապարտուի, անոր համար, որ Նոյ ապագայի մարգարէացում մըն է որ կ'ընէ, որովհետեւ ապագային Քանանը նաեւ ծանօթ պիտի դառնար բարոյական սանձարձակութեան, եւ պաշտամունքային ու ամենօրեայ կենցաղային յարուկ կերպի մը: Իսկ կողմէ, այս մերկութեան մէջ, կ'արծէք կը նախապարկերացուի Քրիստոսի մերկութիւնը խաչի վրայ, որուն դիմաց պիտի ծիծաղէին:

*Պահապան ամենայնի Քրիստոս,  
աչ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի ցանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*